ԴԵՊԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՅՕ-ԱՄՅԱԿԸ

Ա. Ա. ՍԱԴԱՂՅԱՆ

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

*Սոցիալիստական մրցությունը մեծ Լենինի նախաձեռնությամբ ծնունդ առնելով Ռուսաստանում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակի առաջին տարիներին, զարգանալով ու կատարելագործվելով, սովետական իշխանության կեսդարյա պատմության ընթացքում հանդիսացել է և այժմ էլ հանդիսանում է մեր հասարակարգի շարժիչ ուժը։ Սոցիալիստական մրցությունը ծնունդ առավ այն ժամանակ, երբ լայն մասշտաբներով ծավալվեց կապիտալիստական սեփականության լիկվիդացման և արտադրության նկատմամբ սոցիալիստական սեփականության հաստատման, կապիտալիստական հարաբերությունների սոցիալիստականի փոխարկման պրոցեսը։*

*Վ. Ի. Լենինը իր «Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը» աշխատությունում կանխագծել է սոցիալիստական մրցության առաջացման նախադրյալները։ Նա քննադատելով կապիտալիստական արտադրահարաբերություններում մրցության ու կոնկուրենցիայի հակաաշխատավորական բնույթը, նշել է. «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը, այլև, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երևան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով*[1]

*Մեծ առաջնորդը այդ աշխատության մեջ ձևակերպել է սոցիալիստական մրցության կազմակերպական հիմնական սկզբունքները։ Այդ սկզբունքներից են՝ մրցության լայն մասսայականությունը և հրապարակայնությունը, մրցության արդյունքների ամփոփումը, առաջավոր փորձի տարածումը և այլն։ Վ. Ի. Լենինը բացահայտեց սոցիալիստական մրցության հիմնական բնույթը՝ ետ մնացողներին հասցնել առաջավորներին, որպեսզի տեղի ունենա ընդհանուր արտադրական վերելք։*

*Սոցիալիստական մրցությունը պայմաններ է ստեղծում սովետական մարդու ստեղծագործական ընդունակությունների լիակատար ծավալման համար, առաջ է մղում սոցիալիստական արտադրությունը, ճանապարհ հարթում նոր, առաջավոր նախաձեռնությունների համար, պայմաններ ստեղծում բյու-*

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։

բոկրատիզմը, անպատասխանատվությունը, քաշքշուկը, անտարբերությունը հաղթահարելու համար։

Սոցիալիստական մրցությունը դարձել է աշխատավորների կոմունիստական դաստիարակության մեծ դպրոց, որտեղ ձևավորվում են մարդկանց վեհ գաղափարները՝ նվիրվածություն սոցիալիստական հայրենիքին, սեր դեպի ժողովուրդը, անսպառ հոգատարություն մարդկանց նկատմամբ, փոխադարձ հարգանք, ընկերական համագործակցություն, սոցիալիստական փոխըմբռնումներ։

Վ. Ի. Լենինը սոցիալիստական մրցությունը համարում էր նոր հասարակարգի կառուցման մեթոդ։

Սոցիալիստական մրցությունն իր մոտ կեսդարյա պատմության ընթացքում ունեցել է զարգացման մի քանի էտապներ։ 1919 թ. կոմունիստական շաբաթօրյակները հանդիսացան սոցիալիստական մրցության առաջին ծիլերը, որոնք սովետական պարարտ հողում աճեցին ու զարգացան՝ դառնալով սոցիալիստական աշխատանքի կազմակերպման հիմնական մեթոդները։ ՌԿԿ Կենտկոմը 1919 թ. իր «Հեղափոխական ձևով աշխատանքի մասին» նամակում կարևոր նշանակություն տալով կոմունիստական շաբաթօրյակներին նշել է, որ այդ շաբաթօրյակների պատմական նշանակությունը կայանում է նրանում, որ նրանցում հանդես է գալիս բանվորների գիտակցական, բարեխիղճ վերաբերմունքը դեպի աշխատանքի սոցիալիստական կազմակերպումը, որն ուղղված է արտադրողականության բարձրացմանը, նոր աշխատանքային կարգապահության անցմանը, տնտեսության սոցիալիստական պայմանների ստեղծմանը, նոր կյանքի կառուցմանը»։

Կուսակցության Կենտկոմը 1920 թ. մարտին մշակեց «Շաբաթօրյակների մասին կանոնադրություն», որտեղ նշված է, որ շաբաթօրյակները պետք է դառնան կոմունիստական աշխատանքի ձևերի լաբորատորիաներ։ ՌԿ(բ)Կ 9-րդ համագումարի բանաձևերում նշված է. «աշխատավոր մասսաների վրա ագիտացիոն-գաղափարական ներգործման և ակնհայտ դատարկապորտների, պարազիտների ու կազմալուծողների նկատմամբ գործադրվող ռեպրեսիաների հետ մեկտեղ աշխատանքի արտադրողականության բարձրացման հզորագույն ուժ է հանդիսանում մրցությունը»[3]։ Համագումարը հատուկ կերպով պահանջում է լուրջ ուշադրություն նվիրել կոմունիստական շաբաթօրյակներին[4]։

1923 թ. հոկտեմբերին ՀԱՄԿԽ-ն և ԺՏԳԽ-ն բոլոր բանվորներին, արհմիութենական և տնտեսական օրգաններին ուղղված նամակում կոչ արեցին պայքարել աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։ Այդ առթիվ արտադրական ձեռնարկություններում, շինարարությունում առաջ եկան արտադրական և էկոնոմիկական խորհրդակցություններ, որոնց ընդերքում առկայծեցին սոցիալիստական մրցության կայծերը։ 1926 թ. առաջացան աշխատանքի կազմակերպման ությակներ, արտադրական ստուգատեսներ, արտադրական անսարքությունները վերացնող հարվածային բրիգադներ և

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 504։

3 ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, մաս 1, 1954, էջ 610։

4 Նույն տեղում, էջ 620։

այլն։ 1929 թ. վերջերին մեր երկրում արդեն կային 30 հազար հարվածային բրիգադներ[5]։

1935 թ. ծնունդ առավ ստախանովյան շարժումը, որը լայնորեն տարածվեց մեր երկրի, այդ թվում նաև Հայաստանի արտադրական ձեռնարկություններում։ Ստախանովյան շարժումը ծնեց բուսիդինյան շարժումը՝ ավտոմոբիլային արդյունաբերությունում, գուդովյանը՝ հաստոցաշինությունում, սմետանինյանը՝ կոշիկի արդյունաբերությունում, Մարիա և Լուսի Վինագրադովաներինը՝ տեքստիլում, կրիվոնոսովյանը՝ տրանսպորտում։

Աշխատանքի սոցիալիստական կազմակերպման այդ շարժումները հանդիսացան սոցիալիստական մրցության նոր, բարձր էտապը, քանի որ դրանք կապված էին նոր տեխնիկայի հետ, տալիս էին աշխատանքի կազմակերպման լավագույն օրինակ, ծնում էին նոր տեմպեր և աշխատանքի առաջավոր մեթոդներ, վարգացնում էին ռացիոնալիզատորական շարժումը, առաջ էին մղում սոցիալիստական արտադրության տեխնիկան և կուլտուրան։

Հետագա տարիներին ծնվեցին և արագ թափով ծավալվեցին սոցիալիստական մրցության այնպիսի ձևեր, ինչպես բազմահաստոցայնակաները, հազարակաները, երկուհազարակաները, խմբային մրցությունը, համամիութենական սոցիալիստական մրցությունը և այլն։

Այսպիսով, սոցիալիստական մրցությունը կարելի է բաժանել հետևյալ էտապների. սկզբնական էտապ՝ 1917 թ. նոյեմբերից 1929 թ., առաջին էտապը՝ 1929—1935 թթ., երկրորդը՝ 1935—1958 թթ., երրորդը՝ 1958 թ. աշնանից։

Ներկա հոդվածում կփորձենք կանգ առնել վերջին էտապում Երևան—Կիև—Թբիլիսի—Բաքու քաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցության վրա, որպես ՍՍՀՄ եղբայրական ուկրաինական. հայ, վրացի և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության և համագործակցության վառ դրսևորում։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո անցած կես դարում ոչ միայն վերածնվել ու զարգացման անշեղ ուղի են անցել մեր Միության բոլոր ժողովուրդները, այլև նոր բովանդակություն է ստացել նրանց միջև եղած դարավոր բարեկամությունը։

Սովետական ժողովուրդների անխախտ բարեկամության հիմքում դրված է լենինյան ազգային քաղաքականությունը։ Ժողովուրդների բարեկամությունը և համագործակցությունը հանդես են գալիս մեր կյանքի բոլոր բնագավառներում՝ տնտեսական համագործակցության մեջ, գաղափարական ու կուլտուրական կյանքում։

Ժողովուրդների բարեկամության և համագործակցության արտահայտություններից մեկն էր Ղազախստանի, Սիբիրի, Մերձվոլգյան և այլ շրջանների ավելի քան 40 միլիոն հեկտար խոպան հողերի յուրացումը, որին ակտիվ մասնակցեցին Սովետական Միության բոլոր ժողովուրդները։

Այնպիսի վիթխարի կառուցումներ, ինչպես Բրատսկի, Վոլգյան և Կույբիշևյան հիդրոէլեկտրակայանների կառուցումներն էին, իրականացվեցին եղբայրական ժողովուրդների օգնությամբ։

Մեր հանրապետության այնպիսի մեծ կառուցումների, ինչպիսին են՝ Կիրովականի քիմիական կոմբինատի, Երևանի և Հրազդանի ջերմաէլեկտրա-

---

5 Н. П. Васильева, Московские коммунисты в борьбе за внедрение и развитие новых форм социалистических соревнований, М., 1963, стр. 37.

կենտրոնների, Արփա—Սևան ջրատար ուղու 48 կիլոմետր երկարությամբ թունելի կառուցմանը մասնակցել են ռուս, ուկրաինացի, բելոռուս, ադրբեջանցի, վրացի և այլ եղբայրական ժողովուրդների մասնագետները։

Հայաստանը Ռուսաստանի Ֆեդերատիվ, Ուկրաինական, Բելոռուսական և այլ հանրապետություններից ստանում է մոտ հազար անուն դետալներ և պատրաստի հանգույցներ՝ հանրապետության մեքենաշինական ձեռնարկությունների համար։ Իր հերթին Հայաստանը սովետական հանրապետություններին մատակարարում է իր արտադրանքի հարյուրավոր տեսակներ՝ գունավոր մետաղներ, արժեքավոր քիմիական նյութեր, մեքենաներ, հաստոցներ, սարքավորումներ, շինարարական նյութեր, ժողովրդական սպառման ապրանքներ և այլն[6]։ Միայն սովետական երեք հանրապետությունների՝ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի միասնական ուժերով լուծվում են այնպիսի տնտեսական խոշոր պրոբլեմներ, ինչպիսիք են՝ վառելիքա-էներգետիկ բալանսը, համապետական և միջշրջանային նշանակություն ունեցող բնական հարստությունների տնտեսական շրջանառության մեջ դնելը, երկաթուղային և ճանապարհային կառույցները, խոշոր ջրատնտեսական օբյեկտների ստեղծումը[7]։

Ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունի եղբայրական հանրապետությունների՝ Ուկրաինայի, Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի մայրաքաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցությունը, որը հանդիսանում է այդ բարեկամության երաշխիքը։

Սոցիալիստական մրցության կարևոր բնույթը նրա համաժողովրդականությունն է։ Վերջին տասնամյակում լայն տարածում է ստացել առանձին հանրապետությունների, մարզերի, երկրամասերի, շրջանների, քաղաքների ու ձեռնարկությունների, գիտահետազոտական հիմնարկների և ուսումնական հաստատությունների միջև տեղի ունեցող սոցիալիստական մրցությունը։

1956 թ. աշնանը առաջին անգամ Երևանի աշխատավորական պատվիրակությունը ժամանեց Կիև և սոցիալիստական մրցության հրավիրեց Կիևի աշխատավորներին։ Երևանի և Կիևի միջև կնքվեց սոցիալիստական մրցության առաջին պայմանագիրը։ Երկու եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքների միջև ծավալվեց գործարար սոցիալիստական մրցություն, որն ընդգրկեց այդ քաղաքների ժողովրդական տնտեսության ու կուլտուրական շինարարության բոլոր բնագավառները։ Այդ օրվանից սկսած մեր հանրապետական թերթերի, հատկապես «Երեկոյան Երևան» թերթի էջերում հաճախակի հրապարակվում են Երևան—Կիև սոցիալիստական մրցության մասին հոդվածներ։

Սոցիալիստական մրցություն ծավալվեց Երևանի և Կիևի բազմաթիվ արտադրական ձեռնարկությունների, շինարարական կազմակերպությունների միջև։ Մրցակից կոլեկտիվները սկսեցին փոխայցելություններ կատարել միմյանց, ոչ միայն ստուգել ստանձնած պարտավորությունների արդյունքները, այլև փոխադարձ օգնություն ցույց տալ և փոխանակել միմյանց առաջավոր փորձը։ Փոխադարձ աջակցության և օգնության վառ օրինակ է Կիևի ու Երևանի ճշգրիտ էլեկտրասարքերի գործարանների միջև ծավալված սոցիալիստական

6 Տե՛ս С. Мовсесян, Армения вчера, сегодня, завтра, Ереван, 1966, стр. 280.
7 սույն տեղում, էջ 281։

մրցությունը։ 1957 թ. Երևանի ճշգրիտ էլեկտրասարքերի գործարանի գլխավոր կոնստրուկտոր Ա. Սահակյանը, տեխնոլոգիական բաժնի պետ Ա. Հակոբյանը, վարպետներ Խ. Հովհաննիսյանը, Վ. Դիմուրջյանը, Կ. Խորոզյանը եղել են կիևցի բարեկամների մոտ, ուսումնասիրել նրանց աշխատանքի առաջավոր մեթոդները, վերջիններս երևանցի բարեկամներին ցույց են տվել անհրաժեշտ օգնություն։ Գործարանի առաջավոր ռացիոնալիզատոր Օ. Ներսիսյանը կիևցիների օրինակով առաջարկել է մեքենայացնել աշխատատար մի գործողություն՝ էլեկտրական կոճերի փաթաթումը, որի արմատավորման շնորհիվ ձեռնարկությունը ունեցավ 5 հազար ռուբլու խնայողություն[8]։

Հայաստանը չնայած հարուստ է պեռլիտով, բայց մինչև վերջերս չէր կազմակերպվում փքված պեռլիտի արտադրություն։ Կիևցի մասնագետների ակտիվ աջակցությամբ Երևանի տնաշինական կոմբինատում գործարկվեց փրքված պեռլիտի արտադրության կայանքը։

Սերտ կապ և համագործակցություն է ստեղծվել «Երևանկաբել» և «Ուկրկաբել» գործարանների միջև։ 1955 թ. այդ երկու ձեռնարկությունները կնքեցին սոցիալիստական մրցության առաջին պայմանագիրը։ Այդ համանման ձեռնարկությունների սերտ համագործակցությունը մեծ չափով նպաստեց արտադրության կատարելագործմանը և տեխնիկական առաջադիմությանը։ 1956 թ. «Երևանկաբել» գործարանը ստացել էր վուլկանիզացնող ագրեգատ, սակայն համապատասխան մասնագետներ չունենալու պատճառով ձեռնարկությունը դժվարանում էր ագրեգատը շահագործման հանձնել։ Այդ նպատակով Երևանից մոտ 10 մասնագետներ արտադրական պրակտիկայի մեկնեցին իրենց մրցակից «Ուկրկաբել» գործարան և, տիրապետելով վուլկանիզացնող ագրեգատի տեխնոլոգիան, այն շահագործման հանձնեցին։

Երևանի մասնագետներն իրենց հերթին շատ բանով են օգնել կիևցիներին։ Կիևի շինարարների պատվիրակությունը ծանոթանալով Երևանի շինարարական ինդուստրիային, մասնավորապես տանիքները երկաթ-բետոնե կոնստրուկցիաներով ծածկելու մեթոդին, որը մշակվել է Հայաստանի շինարարական նյութերի գիտահետազոտական ինստիտուտում, կիրառեց Կիևի շինարարական պրակտիկայում։

Հայտնի է, որ Կիևը համարվում է ծաղկի ու այգիների քաղաք, և այստեղ Երևանցիները, իհարկե, ուսանելի շատ բան ընդօրինակեցին կիևցիներից։ Վերջիններս Երևան ուղարկեցին 10 հազար ծառ ու թուփ, որոնք այսօր զարդարում են Կաթնաղբյուրի տնկարանն ու շամպայն գինիների գործարանի սարալանջը, Երևանի մի շարք պուրակներն ու պողոտաները։ Կիևից ստացված մանրատերև ղարաղաչները, վարդերը, եղրևենիներն ու թխկենիները զարդարում են Երևանի շատ թաղամասեր ու փողոցներ։ Իսկ հայ բարեկամները կիևցիներին հաղորդել են անջրդի պայմաններում կանաչ տարածություններ ստեղծելու փորձը։ Այժմ Կիևի փողոցներում փարթամորեն աճում են երևանյան մեխակը և այլ ծաղկաբույսեր[9]։

Կիևի Տ. Գ. Շևչենկոյի անվան պետական համալսարանի մի խումբ պատվիրակներ լինելով Երևանի պետհամալսարանի հյուրը և ծանոթանալով համալսարանական կյանքին ու մայրաքաղաքին, «Երևան» թերթում գրեցին.

---

8 «Երևան», № 72, 1958։

9 «Երեկոյան Երևան», 14 նոյեմբերի 1966 թ.։

«Մեզ հիացմունք է պատճառում այն, որ աշխատասեր հայ ժողովուրդը այդպիսի արագությամբ վերափոխում է իր՝ մոտ 3000-ամյա մայրաքաղաքը, այն դարձնում ավելի բարեկարգ ու գեղեցիկ։ Երևանն այնքան է ընդարձակվել, որ մի քանի օրը արդեն բավական չէ նրան ծանոթանալու համար։ Մենք մեկնում ենք՝ մեզ հետ տանելով հիանալի տպավորություններ Հայաստանի ծաղկող մայրաքաղաքից, նրա հյուրասեր բնակիչներից, մեր սիրելի բարեկամներից՝ Երևանի համալսարանականներից»[10]։

Սոցիալիստական մրցության գրավականը, նրա ռեալականությունը կատարման ստուգումն է։ Նկատի ունենալով այս սկզբունքի կարևոր նշանակությունը մրցակից քաղաքները տրադիցիա են դարձրել սոցիալիստական մրցության պարտավորությունների ստուգումն ու արդյունքների ամփոփումը, նոր, ավելի բարձր և ռեալ պարտավորությունների ստանձնումը։ Այս հարցերը քննարկվում են Կիևի և Երևանի աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային սովետների սեսիաներում, քաղաքային, շրջանային կուսակցական, սովետական ակտիվի ժողովներում, ձեռնարկությունների կոլեկտիվների արտադրական խորհրդակցություններում։

1958 թ. ապրիլի 15-ին տեղի ունեցավ Երևանի աշխատավորների ներկայացուցիչների համաքաղաքային ժողով, որտեղ ամփոփվեցին Երևան—Կիև սոցիալիստական մրցության 1957 թվականի պարտավորությունների կատարման արդյունքները և կնքվեց 1958 թվականի համար նոր պայմանագիր։ Կիևի աշխատավորության պատվիրակությունը ղեկավարում էր Ուկրաինայի կոմկուսի Կիևի քաղկոմի քարտուղար Ե. Շչուդրան։ Պարտավորությունների կատարման արդյունքները ցույց տվեցին, որ երկու քաղաքներն էլ ձեռք են բերել զգալի նվաճումներ։ Մասնավորապես նշվեց, որ 1957 թ. 8 ամսվա համախառն արտադրանքի արտադրության պլանը երևանցիները կատարել են ժամկետից շուտ՝ օգոստոսի 21-ին։ Համախառն արտադրանքի արտադրության աճը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ կազմել է 14,2 տոկոս։ Մեծ հաջողություններ էին ձեռք բերել նաև կիևցի մրցակիցները։ Երևան—Կիև սոցիալիստական մրցության ծավալման շնորհիվ Երևանի արդյունաբերությունը 1957 թ. պետական պլանը կատարեց դեկտեմբերի 20-ին[11]։

1958 թ. ապրիլի 16-ին ՀԿԿ Կենտկոմում հանդիպում կազմակերպվեց Կիևի պատվիրակության հետ։ Այդ հանդիպման ժամանակ կիևցիները մրցակիցներին տվեցին մի շարք կարևոր խորհուրդներ։ Մասնավորապես, նրանք նշեցին, որ Երևանի տրամվայ-տրոլեյբուսի գծերի երկայնքով դրված փայտյա և մետաղյա հենասյուները անհրաժեշտ է փոխարինել ազբեստացեմենտային խողովակներով, որոնք ավելի հարմար և շահավետ են։

Համագործակցության, փոխօգնության ու եղբայրության նշանաբանով սկսվեց նաև Երևան—Թբիլիսի—Բաքու սոցիալիստական մրցությունը։ Անդրկովկասյան երեք դրկից հանրապետությունների մայրաքաղաքների աշխատավորների միջև սոցիալիստական մրցությունը հիմք դրվեց 1961 թվականին։ Ճիշտ է, Վրաստանի և Հայաստանի, ինչպես նաև Ադրբեջանի առանձին շրջաններ, ձեռնարկություններ ու կոլտնտեսություններ սոցիալիստական մրցության մեջ էին մտել ավելի շուտ, բայց երեք մայրաքաղաքների մրցությունը ավելի

10 «Երևան», № 72, 1958։

11 Տե՛ս «Երևան», 30 օգոստոսի 1958 թ.։

մասսայական դարձավ 1961 թ.։ Օրինակ՝ Երևանի Օրջոնիկիձեի շրջանը սոցիալիստական մրցության մեջ է Թբիլիսիի Հոկտեմբերյան շրջանի հետ 1957 թվականից։ Եղբայրակից հանրապետությունների մայրաքաղաքների այդ երկու շրջանների աշխատավորների պատվիրակությունները հաճախակի փոխայցելություններ են կատարում, ստուգում, ամփոփում սոցիալիստական մրցության պայմանագրերում ստանձնած պարտավորությունները, միմյանց ցույց տալիս անհրաժեշտ օգնություն։ 1958 թ. մայիսի 8—12-ը Երևանի Օրջոնիկիձեի շրջանի պատվիրակները հյուր եղան Թբիլիսցի իրենց մրցակիցների մոտ։ Այդ փոխայցելությունների մասին Վրաստանի կոմկուսի օրգան «Սովետական Վրաստան» և ՀԿԿ Երևանի քաղկոմի օրգան «Երևան» թերթերը էջեր փոխանակեցին[12]։ Այդ թերթերի էջերում իրենց աշխատանքի փորձի և սոցիալիստական մրցության պարտավորությունների մասին են պատմում Վրաստանի կոմկուսի Թբիլիսիի Հոկտեմբերյան շրջկոմի քարտուղար Շ. Դոլիձեն, ՀԿԿ Օրջոնիկիձեի շրջկոմի քարտուղար Ս. Եսաջյանը. Երևանի «Շինանյութ» գործարանի դիրեկտոր Ն. Թոթոլյանը, Թբիլիսիի Օրջոնիկիձեի անվան մեքենաշինական գործարանի բանվոր Ա. Սիդոմիձեն, աշխատավորների դեպուտատների Թբիլիսիի Հոկտեմբերյան շրջսովետի գործկոմի նախագահ Լ. Պետրոսյանը և ուրիշներ։

Սոցիալիստական մրցության լավագույն տրադիցիաներ կան նաև Հայաստանի և Ադրբեջանի աշխատավորների միջև։ 1960 թ. Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի և Ադրբեջանական ՍՍՀ Սումգայիթի սինթետիկ կաուչուկի գործարանը սոցիալիստական մրցության մեջ են։ Հայ և ադրբեջանցի կաուչուկագործները հաճախակի հանդիպում են միմյանց, ստուգում վերցրած պարտավորությունները, ուսումնասիրում միմյանց ձեռք բերած առաջավոր փորձը։

1962 թ. նոյեմբերին Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի կոլեկտիվի պատվիրակները եղան Սումգայիթում և իրենց ադրբեջանցի բարեկամների հետ միասին ամփոփեցին սոցիալիստական մրցության պարտավորությունները։ Արդյունքները ցույց տվեցին, որ երկու ձեռնարկություններն էլ ձեռք են բերել լուրջ հաջողություններ։ Սումգայիթի սինթետիկ կաուչուկի գործարանի գործարհկոմի նախագահ Ռ. Խալիկովը հայ պատվիրակներին ծանոթացնելով իրենց ձեռնարկության գործունեությանը, ասաց. «այս հաջողությունները մեծապես արդյունք են նաև մեր երևանցի կաուչուկագործների հետ ծավալված գործարար մրցության։ Մեր ձեռնարկությունը նոր է, և սկզբնական շրջանում շատ դժվարությունների էինք հանդիպում։ Սակայն միշտ էլ օգնության են հասնում մեր հայ բարեկամները։ Կիրովի անվան գործարանի տասնյակ մասնագետներ, առաջավոր բանվորներ ամիսներով եղել են մեզ մոտ և ադրբեջանցի կաուչուկագործներին սովորեցրել են կաուչուկի ստացման տեխնոլոգիան»[13]։ Ադրբեջանցի բարեկամներին իրենց ձեռնարկության աշխատանքների մասին է պատմել Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի գործարհկոմի նախագահ Մ. Սողոմոնյանը[13]։ Այնուհետև փորձի փոխանակման կարգով հանդիպում են ունենում Սումգայիթի սինթետիկ կաուչուկի գործարա—

12 Տե՛ս «Սովետական Վրաստան», 24 մայիսի 1958 թ. և «Երևան», 20 մայիսի 1958 թ.։

13 «Երևան», № 280, 1962 թ.։

14 Նույն տեղում։

նի կուսկոմիտեի քարտուղար Բեուգազա Աղաևը և Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ Աշոտ Թափալցյանը։ Նրանք միմյանց պատմում են կուսակցական կազմակերպական-քաղաքական աշխատանքի ձևերի ու մեթոդների մասին։ Բ. Աղաևը ուրախությամբ է ընդունում այն լուրը, որ մրցակից ձեռնարկության 11 արտադրամաս, 37 բրիգադ, 56 հերթափոխություն արդեն արժանացել են կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման[15]։

Այդ երկու ձեռնարկությունների փոխօգնության և համագործակցության վերաբերյալ կան բավական փաստեր։ Դրանցից բերենք միայն մի օրինակ։ Սումգայիթի սինթետիկ կաուչուկի գործարանի ժապավենաթող մեքենան նորմալ չէր աշխատում, որի պատճառով էլ կաուչուկը չէր ստացվում։ Այդ դժվար պահին իրենց օգնության ձեռքն են մեկնում երևանցի կաուչուկագործները։ Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի 30—30ա արտադրամասի բաժնի պետ Վահան Ասատրյանը մեկնում է Սումգայիթ և օգնում արտադրության այդ «նեղ» տեղը վերացնելու համար։ «Նա տասնյակ փորձեր է կատարում մեքենան կարգի գցելու համար։ Նրա ջանքերը հաջողությամբ են պսակվում։ Ադրբեջանցի ընկերների հետ միասին նա կարգավորում է մեքենան և գործի դնում»[16]։

Սումգայիթի գործարանի կոլեկտիվը իսկական ինտերնացիոնալ ընտանիք է։ Այստեղ միմյանց կողքի աշխատում են տարբեր ազգերի ներկայացուցիչներ։ Օրինակ, կատալիզատորային արտադրամասի պետն էր Թաթար Ուսման Տազերդինովը, նրա տեղակալը՝ հրեա Սեմյոն Շուլմինը, մեխանիկը՝ ռուս Անատոլի Գոլաբովը։ Այստեղ միմյանց կողքի աշխատում են խառատ Հաջիբաբա Մասանովը, Շահեն Պետրոսյանը, Սաֆար Իսաևը, Ալբերտ Այվազյանը, Ամիրզա օղլի Կունսևը և շատ ուրիշներ։ «Նրանք բարեկամներ են, եղբայրներ, օգնում են միմյանց, ուրախանում հաղթանակների, տխրում անհաջողությունների համար»[17]։

1957 թ., Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 40-ամյակի պատվին մեր երկրում ծավալվեց համաժողովրդական սոցիալիստական մրցություն։ Այս նոր շարժման հիմնական բնույթը արտահայտվեց նրանում, որ սկսեցին մրցել հանրապետությունը՝ հանրապետության հետ, մարզը՝ մարզի, քաղաքը՝ քաղաքի, կոլտնտեսությունը՝ կոլտնտեսության, ձեռնարկությունը՝ ձեռնարկության, բրիգադը՝ բրիգադի հետ։

Կոմունիստական աշխատանքի համար մրցության ծավալման առաջին իսկ տարում Երևանի արտադրական ձեռնարկությունների մի շարք բրիգադներ սերտ կապերի մեջ մտան Միության տարբեր քաղաքների ձեռնարկությունների համանման բրիգադների հետ։ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի № 12 արտադրամասի Վ. Թադևոսյանի ղեկավարած բրիգադը մրցության մեջ էր մտել Մոսկվայի Իլյիչի անվան գործարանի մեխանիկական արտադրամասի փականագործ Ա. Սինինի բրիգադի հետ։ Երևանցի մրցակիցները խոստացան՝ յոթնամյակի առաջին տարվա առաջադրանքը կատարել 130

15 Նույն տեղում։

16 «Երևան», № 280, 1962։

17 Նույն տեղում։

տոկոսով, պլանից ավելի տալ 100 կոմպլեկտային տրանսֆորմատորային ենթակայան, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել 15 տոկոսով[18]։

Տարեցտարի ամրապնդվում է Կուսկովի և Երևանի «պոլիվինիլացետատ» գործարանների կոլեկտիվների բարեկամությունը։ Այդ երկու ձեռնարկությունների կոլեկտիվները ընդօրինակում են միմյանց դրական փորձը, անհրաժեշտության դեպքում օգնում են վերացնելու աշխատանքում գոյություն ունեցող թերությունները։ Ահա թե ինչ են գրում Երևան այցելած Կուսկովի քիմիական գործարանի պատվիրակության անդամներ Ա. Սարգսյանը, Ե. Լեբեդեվան, Ա. Զուբախինան և Վ. Կոպտեվսկին իրենց «Լենինյան ուղիով» բազմատիրաժ թերթում. «Օրերս մենք եղանք Երևանի «պոլիվենիլացետատ» գործարանում՝ փորձի փոխանակման և սոցիալիստական մրցության 1962 թ. առաջին կիսամյակի արդյունքների ամփոփման նպատակով... մեկ դուր եկավ ՊՎԲ թաղանթների արտադրամասը, որը կրում է կոմունիստական անունը։ Արտադրամասում տիրում է մաքրություն, կարգ ու կանոն։ Այդ արտադրամասի շենքը շրջապատված է մրգատու ծառերի այգով, որը մշակվում է կոլեկտիվի անդամների ձեռքով»[19]։

Այնուհետև թերթում մանրամասն հաղորդվում է երկու ձեռնարկությունների միջև ծավալված սոցիալիստական մրցության պարտավորությունների ամփոփման մասին։ Լայն քննարկումից հետո երկու կողմերն էլ գալիս են այն եզրակացության, որ չնայած ձեռք բերած նշանակալի հաջողություններին, հաղթող չճանաչել ոչ մեկին, քանի որ երկու ձեռնարկությունների թե՛ արտադրական կյանքում և թե՛ կարգապահության գործում կան թերություններ։

Հայաստանի Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան և Վրաստանի Մախարաձեի շրջանի Նաթանեբի գյուղերի մրցությունը թևակոխել է իր 30-րդ տարին։ Այդ մրցությունը հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության վառ արտահայտություններից է։ Մոտ երեք տասնամյակ երկու կոլտնտեսությունների աշխատավորները համագործակցել են իրար հետ, սովորել միմյանցից և հասել ընդհանուր վերելքի։

Մրցության առաջին տարում՝ 1937 թ. ընդամենը 6 հեկտար մանդարինի այգի և տարեկան 67 հազար ռուբլի դրամական եկամուտ ունեցող Նաթանեբին այսօր հանրապետության ամենաառաջավոր կոլտնտեսություններից մեկն է։ Նա այժմ մշակում է 500 հեկտար թեյի պլանտացիա, իսկ դրամական եկամուտը գերազանցում է մեկ միլիոն 700 հազար ռուբլուց։

Մրցության տարիներին անճանաչելիորեն փոխվել է նաև Նալբանդյանը։ 1936 թ. համեմատությամբ 21 անգամ աճել է նրա դրամական եկամուտը։ Ընթացիկ տարվա 10 ամսում կոլտնտեսության դրամական եկամուտը կազմել է մեկ միլիոն 50 հազար ռ.։

Այդ երկու մրցակից կոլտնտեսությունների ներկայացուցիչները ամեն տարի հանդիպում են, ամփոփում մրցությամբ վերցրած պարտավորությունները, ուսումնասիրում են միմյանց փորձը։

«Նաթանեբցիները ծանոթացան Նալբանդյանի կոլտնտեսության աշխատանքներին, եղան շրջանի արդյունաբերական ձեռնարկություններում և կուլտուրական օջախներում։ Ապա ակումբի դահլիճում հրավիրվեց հանդիսավոր

---

18 «Սովետական Հայաստան», 4 ապրիլի, 1959։

19 «По ленинскому пути», № 40, 1962.

երեկո, ամփոփվեցին հնգամյակի առաջին տարվա պարտավորությունների կատարման արդյունքները։ Իրենց տնտեսությունների հաջողությունների մասին պատմեցին Նաթանեբիի կոլտնտեսության նախագահի տեղակալ Շալվա Նակաիձեն և Նալբանդյանի կոլտնտեսության նախագահ Թ. Մկրտչյանը»[20]։

1963 թ. ապրիլի 23-ին տեղի ունեցավ Երևան քաղաքի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողով, որը նվիրված էր Երևան—Կիև—Թբիլիսի—Բաքու քաղաքների սոցիալիստական մրցությանը։ Ակտիվի ժողովում ներկա էին Կիևի, Թբիլիսիի և Բաքվի աշխատավորների պատվիրակները։ Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Գ. Գոշաձեն ժողովում ունեցած իր ելույթում նշեց. «Դարերի խորքից է գալիս հայ և վրացի ժողովուրդների բարեկամությունը։ Այն զոդվել ու ամրապնդվել է սերունդների արյունով, որը հոսել է օտար բռնակալների դեմ ուս-ուսի տված հերոսական պայքարում։ Դարերի խորքից է գալիս հայ և վրաց ժողովուրդների եղբայրությունը։ Այն դիմացել է մահաբեր հողմերին ու մրրիկներին։ Սակայն այդ եղբայրությունն ու բարեկամությունը նոր բովանդակություն ստացան սովետական իշխանության տարիներին»[21]։

Ապրիլի 24-ին Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում տեղի ունեցավ Կիև—Բաքու—Թբիլիսի—Երևան քաղաքների բարեկամության երեկոն, որին մասնակցում էին սոցիալիստական մրցության մեջ գտնվող չորս եղբայրական հանրապետությունների՝ Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի մայրաքաղաքների աշխատավորների պատվիրակությունները։ Հյուրերի պատվիրակություններին գլխավորում էին Ուկրաինայի Կոմկուսի Կիևի Հոկտեմբերյան շրջկոմի քարտուղար Ե. Լիտվինովը, կուսակցության Բաքվի քաղկոմի քարտուղար Ր. Կարաևը, Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Գ. Գոշաձեն։

Բացելով բարեկամության երեկոն ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Բ. Մուրադյանը նշեց. «Սոցիալիստական մրցությունը հարազատացրել է քաղաքներ ու գյուղեր, մոտեցրել ժողովուրդներին։ Տրադիցիայով մրցում են Երևանն ու Կիևը, Երևանը, Թբիլիսին ու Բաքուն։ Ամրապնդվում են եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամական կապերը։ Մենք ավելի մոտիկից ու ավելի լավ ենք ճանաչում միմյանց, օգնում և սովորում։

Ո՞վ կհաղթի այս մրցության մեջ։ Կհաղթի սովետական մարդը՝ ուկրաինացին, վրացին, հայը, ադրբեջանցին։ Ով էլ որ հաղթի, կշահեն ժողովուրդը, երկիրը, մեր հայրենիքը»[22]։

1966 թ. նոյեմբերի 11-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ բարեկամության երեկո՝ նվիրված Երևան—Կիև սոցիալիստական մրցության տասնամյակին և Երևան—Թբիլիսի—Բաքու քաղաքների մրցության 5-ամյակին, որին մասնակցեցին եղբայրական երեք հանրապետությունների մայրաքաղաքներ՝ Կիևի, Թբիլիսիի, Բաքվի աշխատավորների պատվիրակությունները՝ Ուկրաինայի կոմունիստական կուսակցության Կիևի քաղկոմի քարտուղար Գ. Ռոմանչուկի, Բաքվի քաղսովետի գործկոմի նախագահ Ու. Աբդուլաևի և Թբիլիսիի քաղսովետի գործկոմի նախագահի տեղակալ Գ. Գոշաձեի ղեկավարությամբ։

20 «Սովետական Հայաստան», 25 նոյեմբերի 1956 թ.։

21 «Երևան», № 98, 1963 թ.։

22 «Երևան», № 98, 1963 թ.։

Եղբայրական համագործակցության ու բարեկամության նշանաբանով անցավ 1967 թ. ապրիլի 18-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցած բարեկամության երեկոն՝ նվիրված Ուկրաինական սովետական սոցիալիստական հանրապետությանը։ Բարեկամության երեկույթում ճառերով հանդես եկան ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Դ. Ե. Շելեստը և ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը։ Պ. Ե. Շելեստը նշեց. «Սովետական Միության ժողովուրդների մեջ, այդ թվում նաև Ուկրաինայում, լավ համբավ են վայելում ձեր հրաշալի երկիրը, իմաստուն, տաղանդավոր, աշխատասեր ու հերոս հայ ժողովուրդը, նրա բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության փառապանծ զավակները, գիտնականները, ստեղծագործական մտավորականությունը՝ մեր բազմազգ երկրի կոմունիստական հասարակարգի ակտիվ կառուցողները։ Իսկ մեզնից՝ ուկրաինացիներս յուրաքանչյուրը ուզում է առավել մոտիկից և ավելի լավ ճանաչել ձեր ժողովրդին, ձեր հիասքանչ հանրապետությունը»[23]։

ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը իր ճառում անդրադառնալով հայ-ուկրաինական կապերի ու համագործակցության մասին, նշեց. «Ուկրաինայի և Հայաստանի տնտեսական ու կուլտուրական փոխհարաբերությունները մեր կուսակցության ազգային քաղաքականության իրականացման փայլուն օրինակն են»[24]։ Նա ընդգծեց, որ «Ուկրաինան և Հայաստանը, Կիևն ու Երևանը կապված են սոցիալիստական մրցության բազմամյա տրադիցիայով, որը արտադրության, կուլտուրայի և աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր խթան է, առաջավոր փորձի փոխանակման լավ դպրոց»[25]։

Հայ բանաստեղծ Գուրգեն Բորյանը խոսելով ժողովուրդների բարեկամության մասին, նշել է. «ամեն մի քաղաքակիրթ ժողովուրդ, իր պատմության մատյանում սքանչելի էջեր ունի, որոնք պատմել են ու պիտի պատմեն աշխարհին, այսօր, վաղը ու մշտատև, այն վեհ ու բարձրագնա խորհրդի մասին, որն արտահայտվում է մի լուսավոր, իր մեջ անչափելի հզորություն ու բարձր առաքինություն կրող բառով, որ կոչվում է բարեկամություն»[26]։

ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամությունը, համագործակցությունը օրեցօր ամրանում ու զարգանում են կոմունիզմի լուսաշող ապագայի կառուցման համար համաժողովրդական պայքարում։ Այդ բարեկամության հիմնական երաշխիքներից մեկն է հանդիսանում եղբայրական հանրապետությունների մայրաքաղաքներ Երևան—Կիև—Թբիլիսի—Բաքու սոցիալիստական մրցությունը։

Սոցիալիստական մրցությունը մեծ խթան հանդիսացավ կոմունիստական շինարարության 7-ամյա պլանի իրագործման համար մղած պայքարում։ Մասսաների ստեղծագործական ակտիվության բարձրացման շնորհիվ յոթնամյակում առաջընթաց քայլեր կատարվեցին կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի անընդհատ վերելքի, գիտության ու կուլտուրայի զարգացման, սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում։

23 «Սովետական Հայաստան», 19 ապրիլի, 1967 թ.։

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում։

26 «Սովետական Հայաստան», 8 ապրիլի, 1967 թ.։

Յոթնամյակում ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքի ծավալը աճեց 84 տոկոսով, կապիտալ շինարարությունը՝ 40, տրանսպորտի բոլոր տեսակների բեռնաշրջանառությունը՝ 72 տոկոսով։ Սպառման և կուտակման համար օգտագործված ազգային եկամուտը աճեց 53 տոկոսով և այլն։ Մեծ ուշադրություն դարձվեց բնակարանային շինարարության վրա։ Յոթ տարում կառուցվեց գրեթե 17 միլիոն բնակարան և անհատական տուն, դա կազմում է յոթնամյակի սկզբին երկրի ունեցած բնակելի ֆոնդի մոտ 40 տոկոսը[27]։

Յոթնամյակի տարիներին ՍՍՀՄ-ի բոլոր հանրապետությունների հետ միասին բուռն զարգացում ապրեց նաև Հայաստանը։ Եղբայրական հանրապետությունների միջև ծավալված գործարար սոցիալիստական մրցության շնորհիվ մեծ թափ հաղորդվեց հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական և տրանսպորտային կազմակերպությունների աշխատանքին, գյուղատնտեսության արտադրությանը։

Յոթնամյակում Հայաստանում հանրային արտադրանքը աճեց 80 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի ծավալը ավելացավ 2 անգամ, իսկ ազգային եկամուտը՝ 78 տոկոսով։ Կառուցվեցին ու շահագործման հանձնվեցին 300-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություն ու արտադրամաս։ Հիմնական արդյունաբերական-արտադրական ֆոնդերը ավելացան 2,3 անգամ։ Հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ պետական կապիտալ ներդրումները 1,5 անգամ գերազանցեցին Հայաստանում սովետական իշխանության նախորդ բոլոր 37 տարիների կապիտալ ներդրումների ծավալը[28]։

Վերջին տասնամյակում Սովետական Հայաստանում ստեղծվեցին և արագ թափով զարգանում են արդյունաբերության այնպիսի ժամանակակից ճյուղեր, ինչպիսիք են ճշգրիտ սարքաշինությունը, էլեկտրոնիկան, ռադիոէլեկտրոնիկան, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրությունը, գործիքաշինությունը։

Ուկրաինայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մայրաքաղաքների միջև ծավալված սոցիալիստական մրցությունը նոր թափ է ստացել Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 50-ամյակի պատվին։ Սոցիալիստական մրցությունը նորանոր հաղթանակներ է բերում նոր հնգամյակի պլանների իրականացման համար մղվող պայքարում։

А. А. САДАГЯН

## РАЗВИТИЕ НОВЫХ ФОРМ СОЦИАЛИСТИЧЕСКОГО СОРЕВНОВАНИЯ В ПЕРИОД РАЗВЕРНУТОГО СТРОИТЕЛЬСТВА КОММУНИЗМА

### Резюме

Социалистическое соревнование в течение полувековой истории прошло несколько этапов своего развития. Коммунистические субботники, возникшие в 1919 году, явились зачатками социалистического сорев-

27 Տե՛ս ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1966—1970 թթ. հնգամյա պլանի ՍՄԿԿ XXIII համագումարի դիրեկտիվները, «Սովետական Հայաստան», 8 ապրիլի, 1966 թ.։

28 Տե՛ս Ա. Ի. Քոչինյանի հոդվ. ՍՄԿԿ XXIII համագումարում, «Սովետական Հայաստան», 1 ապրիլի, 1966 թ.։

нования. Эта первоначальная форма социалистической организации труда в процессе строительства социализма и коммунизма в нашей стране получила свое дальнейшее развитие в бригадах коммунистического труда.

В данной статье автор исследует новые формы социалистического соревнования в период развернутого строительства коммунизма. С 1957 года в Армении возникло и развернулось социалистическое соревнование между столицами двух братских республик — Украиной и Арменией, а с 1961 года между городами Ереван — Тбилиси — Баку. В статье подробно излагаются формы и методы социалистического соревнования, способствующие содружеству украинского, армянского, грузинского и азербайджанского народов.

Социалистическое соревнование четырех столичных городов братских республик не только содействует развитию экономики и культуры, но и теснее сплачивает братскую дружбу этих народов.